# ԿՏՐԵԼ ԹՇՆԱՄՈՒ ՆԵՆԳ ՁԵՌՔԸ

«Անասնաբուծության գործը պետք է իրենց ձեռքն առնեն ամբողջ կուսակցությունը, մեր բոլոր աշխատողները՝ կուսակցականներն ու անկուսակցականները, նկատի ունենալով, վոր անասնաբուծության պրոբլեմն այժմ նույնպիսի առաջնահերթ պրոբլեմ է, վորպիսին յերեկ արդեն հաջողությամբ լուծված հացահատիկի պրոբլեմն էր»։

Ընկեր Ստալինի այս ցուցումի անշեղ կենսագործման համար վոտքի յելան անասնաբուծության ֆրոնտում աշխատող ստախանովականները և բոլոր հարվածային կոլտնտեսականները, վորոնք վերջին տարիներին խոշոր վերելք ստեղծեցին անասնապահության ֆրոնտում։ Առաջնորդի ցուցումի կենսագործման համար պայքար ծավալվեց նաև Բայազետի շրջանում։ Յեռանդուն գործի կպավ Բատիկյան գյուղի կոլտնտեսության ձիաբուծական ֆերմայի վարիչ, կուսակցության համակրող չքանչանակիր ընկ. Ոհան Թաթոսյանը։ Նա լավ է գիտակցում ձիու դերը մեր յերկրի պաշտպանության գործում։ Դրա համար էլ ֆերմայի վարիչ յեղած օրվանից նա իր աչքի լույսի պես պահել ու պահպանել է ֆերմայի բոլոր ձիերը։ Ֆերմայի վարիչ յեղած օրվանից նա ամեն տարի կատարել ու գերակատարել է ձիերի աճեցման պետական բոլոր պլանները։ Այս բոլորը գաղաղեցնում էին գյուղում յեղած հակահեղափոխական տարրերին։ Այդ տարրերը վոչնչի առաջ կանգ չեն առնում չքանչանակիր Ոհան Թաթոսյանին վարկաբեկելու, ձիաբուծական ֆերման քայքայելու համար։ Դասակարգային թշնամուն հաջողվում է մի շարք մարդկանց միջոցով վարկաբեկել նրան, փողոցում ղանդաղան խոսքեր շպրտելով նրա հասցեյին։ Տեղի կուսակցական կազմակերպությունը վոչ մի վճռական միջոց ձեռք չի առնում նրա վարկաբեկողներին մերկացնելու ուղղությամբ։ Հալածանքը շարունակվում է։ Չքանչանակիր Ոհան Թաթոսյանը բողոքում է շրջանային դատախազին։ Շրջդատախազ ընկ. Ոնիկ Թամրազյանի հանձնանքով գործի քննությունը ձգձգվում է։ Մինչև այդ գործի ավարտվելը հանկարծ սատկում է ֆերմայի ձին։ Մասնագիտական հանձնաժողովն ապացուցում է, վոր ձին թունավորված է։ Այդ մասին հայտնի յե լինում հողբաժնի վարիչ ընկ. Մ. Քոչարյանին և շրջանի մյուս կազմակերպություններին։ Սկսվում է «խոր» քննությունը։ Քննությունը վոչ մի արդյունք չի տալիս։ Շրջկոմը և հողբաժինն անտարբեր են գտնվում այս հարցում։ Ֆերմայի վարիչ Ո. Թաթոսյանի կողմից Հողժողկոմատի ձիաբուծական վարչության պետ ընկեր Գ. Հարությունյանին ուղարկված նամակը մնում է վերջինիս գրպանում՝ առանց լուծում ստանալու, ինչպես յերևում է նա անընդունակ է գտնվում այդ հարցը լուծելու։ Յերբ հայտնի յե դառնում ձիու թունավորված լինելու հանգամանքը, շրջկոմի քարտուղարի տեղակալ ընկ. Ադլիբեկ Գրիգորյանը գյուղ է գալիս և հաստատում չքանչանակիրին հալածելու ու դասակարգային թշնամու գործունեյության փաստերը։ Ակնհայտ է դառնում այն հանցագործ և վոչ մարդավայել վերաբերմունքը, վոր գոյություն ունի դեպի ֆերմայի վարիչ չքանչանակիր ընկ. Թաթոսյանը։

Սակայն զարմանալին այն է, վոր այս բոլորից հետո էլ Բայազետի շրջկոմի քարտուղար ընկեր Շահվերդյանը և դատախազ ընկեր Թամրազյանը չեն տեսնում դասակարգային թշնամու գործունեյությունը։ Փաստ է, վոր ձիու թունավորումը կատարված է դասակարգային թշնամու ձեռքով,— հայտարարում է դատախազը,— սակայն այժմ հնարավոր չէ նրան գտնել։ Վերջում դատախազ ընկեր Թամրազյանը գյուղում ըստեղծված այդ դրությունը համարում է թյուրիմացության արդյունք։ Այդպես դատել, նշանակում է չտեսնել դասակարգային թշնամու սև գործը։

Հարկավոր է մինչև վերջը մերկացնել թշնամուն և կտրել նրա նենգ ձեռքը։

Մենք համոզված ենք, վոր շրջկոմն այդ կանի և անհրաժեշտ պայմաններ կստեղծի չքանչանակիր աշխատանքի համար։

ԱՐՏ. ԴԱՆՂՅԱՆ